****

22.01.2014թ. N 6 նիստ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սեյրան Մուշեղի Օհանյանին ԵՊԼՀ-ի ոսկե մեդալով պարգևատրելու մասին:

*****

Լսելով և քննարկելով ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության տեղեկատվական քաղաքականության բաժնի պետի տեղակալ Հայկ Վարդանի Մարկոսյանին պատվոգիր շնորհելու վերաբերյալ հարցը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության տեղեկատվական քաղաքականության բաժնի պետի տեղակալ Հայկ Վարդանի Մարկոսյանին շնորհել պատվոգիր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ռազմահայրենասիրական ծրագրերի իրականացման աշխատանքներում գործուն մասնակցության համար:

*****

Լսելով և քննարկելով ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական Դավիթ Վրույրի Ջամալյանին պատվոգիր շնորհելու վերաբերյալ հարցը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական Դավիթ Վրույրի Ջամալյանին շնորհել պատվոգիր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ռազմահայրենասիրական ծրագրերի իրականացման աշխատանքներում գործուն մասնակցության համար:

*****

Լսելով և քննարկելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սեյրան Մուշեղի Օհանյանին Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ոսկե մեդալով պարգևատրելու մասին հարցը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սեյրան Մուշեղի Օհանյանին պարգևատրել Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ոսկե մեդալով Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ռազմահայրենասիրական ծրագրերի իրականացման աշխատանքներում ունեցած նշանակալի ներդրման և ցուցաբերած մշտական աջակցության համար:

****

27.02.2014թ. N 7 նիստ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊԼՀ 2013թ. գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության հաշվետվություն և 2014թ. գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների պլանի հաստատում /Զեկ. Լ. Ֆլջյան/:

2. ԵՊԼՀ գրադարանի գործունեության հաշվետվություն /Զեկ. Ա. Չուլյան/:

3. ԵՊԼՀ կանոնակարգերի հաստատում.
   - «ԵՊԼՀ գիտական խորհրդի կանոնակարգ»-ի հաստատում /Զեկ. Լ. Ֆլջյան/:
   - «ԵՊԼՀ ֆակուլտետի կանոնակարգ»-ի հաստատում /Զեկ. Բ. Մարգարյան/:
   - «ԵՊԼՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոակարգ»-ի հաստուատում /Զեկ. Ց. Ակոպյան/:

4. Մրցույթ՝ դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

5. Ընթացիկ հարցեր:

*****

Լսելով և քննարկելով Գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի հաշվետվությունը 2012 թվականի ընթացքում կատարած գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ի գիտություն ընդունել Լ. Ֆլջյանի հաշվետվությունը 2013 թվականի ընթացքում համալսարանի կատարած գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության վերաբերյալ:
2. ԵՊԼՀ գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեությունը գնահատել բավարար:
3. Հաստատել համալսարանի ամբիոնների և ուսումնագիտական կենտրոնների 2014 թվականի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների պլանները /Տես՝ Հավելված 1/:
4. **Արձանագրել.**

4.1. համալասարանի ՊԴԿ-ի և սովորողների համար մշակված չեն մեխանիզմներ գիտական գործունեության խթանման նպատակով,

4.2. հստակեցված չեն հետբուհական կրթություն ստացող սովորողների խնդիրները՝ համալսարանում իրականացվող գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության, ինչպես նաև հետբուհական կրթության որակի բարձրացման նպատակով,

4.3. ամբիոնների և գիտաուսումնական կենտրոնների միջազգային գործունեության մեջ առկա է ՊԴԿ-ի ցածր ներգրավվածություն,

4.4. համալսարանի ամբիոններում և գիտաուսումնական կենտրոններում բացակայում է ամբիոնական և միջամբիոնական սեմինարների անցակացման պարբերականությունը, բացառությամբ փիլիսոփայության ամբիոնի,

4.5. ոչ բավարար մակարդակի վրա է համալսարանի ամբիոնների ուսանողական գիտական ընկերությունների աշխատանքները,

4.6. ոչ բավարար մակարդակի վրա է համալսարանի երիտասարդ գիտնականների խորհրդի գործունեությունը,

4.7. ոչ լիարժեք է ՀՀ բուհերի վարկանշավորման համար գիտամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների տվյալների հավաքագրումը:

5. Հանձնարարել.

5.1. համալսարանի գիտական մասին՝

- «Լավագույն ամբիոն» մրցույթը տարեկան մեկ անգամ անցկացնելու նպատակով մինչև ս.թ. մայիսի 1-ը ստեղծել հանձնաժողով՝ մրցույթի անցկացման մեխանիզմները ուսումնասիրելու համար, և մինչև ս.թ. դեկտեմբերի 1-ը մշակել համապատասխան կանոնակարգ,

- ի կատարումն համալսարանի 2013-2017 Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի Բաժին 2-ի «Գիտամեթոդական և գիտահետազոտական գործունեություն» 2.1. կետի՝ մինչև սույն թվականի մայիսի 1-ը ստեղծել աշխատանքային խումբ՝ միջազգային և ազգային փորձը՝ գիտական գործունեությունը խթանող մեխանիզմների տեսակներն ուսումնասիրելու նպատակով,

- մինչև սույն թվականի հոկտեմբերի 15-ը մշակել ՀՀ բուհերի վարկանշավորման համար համալսարանի վերաբերյալ տվյալների հավաքագրման ձևաթղթեր համալսարանի ստորաբաժանումների և ՊԴԱ-ի համար:

5.2. **Համալսարանի գիտական մասին և որակի ապահովման կենտրոնին՝** ի կատարումն Համալսարանի 2013-2017 Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի Բաժին 2-ի՝ «Գիտամեթոդական և գիտահետազոտական գործունեություն» 1.1. կետի՝ մինչև սույն թվականի դեկտեմբերի 1-ը գնահատել համալսարանի հետբուհական կրթության առկա կարիքներն աշխատաշուկայում և վերանայել մասնագիտական առարկայական ծրագրերը՝ հետբուհական կրթության որակի բարձրացման նպատակով և ուսումնասիրության արդյունքների մասին տեղեկացնել համալսարանի գիտխորհրդին:

5.3. **Համալսարանի ամբիոններին և գիտաուսումնական կենտրոններին՝** ակտիվացնել համալսարանների ամբիոնների և գիտաուսումնական կենտրոնների միջազգային և միջբուհական գիտական և գիտահետազոտական գործունեությունը՝ նոր գիտական ծրագրեր մշակելու և անցկացնելու միջոցով և մինչև սույն թվականի դեկտեմբերի 1-ը ներկայացնել միջբուհական գիտական և գիտահետազոտական գործունեության գործողության պլանը:

5.4. **Համալսարանի ամբիոններին՝**

- ապահովել ամբիոնների ՊԴԿ-ի գիտահետազոտական գործունեությունը՝ պարբերական սեմինարների անցկացման միջոցով: Մինչև սույն թվականի հոկտեմբերի 1-ը ներկայացնել 2013-2014 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի միջամբիոնական սեմինարների ժամանակացույցը, իսկ մինչև սույն թվականի դեկտեմբերի 1-ը՝ 2015թ. ամբիոնական սեմինարների ժամանակացույցը,

- ակտիվացնել համալսարանի ամբիոնների ուսանողական գիտական ընկերությունների աշխատանքները և մինչև սույն թվականի մարտ ամսվա գործունեությունը՝ պարբերական սեմինարների անցկացման միջոցով: Մինչև սույն թվականի մարտի 15-ը ներկայացնել ամբիոնների պատասխանատու՝ ուսանողական գիտական ընկերության գործունեությունը համակարգելու նպատակով:

5.5. **Հանձնարարել համալսարանի երիտասարդ գիտնականների խորհրդին՝** ակտիվացնել համալսարանի երիտասարդ գիտնականների խորհրդի աշխատանքները՝ երիտասարդ գիտնականների գիտահետազոտական գործունեությանը աջակցելու նպատակով և մինչև սույն թվականի մարտի 15-ը ներկայացնել իրականացվող միջոցառումների ժամանակացույց:

Սույն որոշման կատարումը հանձնարարել համալսարանի ամբիոնների վարիչներին, գիտաուսումնական կենտրոնների ղեկավարներին, երիտասարդ

գիտնականների խորհրդի նախագահին, իսկ կատարման վերահսկողությունը՝ գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանին:

*****

Լսելով և քննարկելով ԵՊԼՀ գիտական գրադարանի վարիչ Ա. Չուլյանի հաղորդումը գրադարանի 2011-2013թթ. գործունեության վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ի գիտություն ընդունել ԵՊԼՀ գիտական գրադարանի վարիչ Ա. Չուլյանի հաղորդումը գրադարանի 2011-2013թթ. գործունեության վերաբերյալ:
2. ԵՊԼՀ գիտական գրադարանի գործունեությունը համարել բավարար:
3. Հանձնարարել գրադարանին կազմակերպել սեմինարներ դասախոսների և ուսանողների համար՝ գրադարանի մատուցած ծառայություններին և հասանելի տեղեկատվական աղբյուրներին ծանոթանալու նպատակով:
4. Հանձնարարել գրադարանին ստեղծել ատենախոսությունների սրահ, որտեղ կզետեղվեն ԵՊԼՀ դասախոսների, ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունները, սեղմագրերը, մենագրությունները և այլ գիտական աշխատությունները:
5. Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել գրադարանի վարիչ Ա. Չուլյանի վրա, իսկ որոշման կատարման հսկողությունը՝ գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի:

*****

Լսելով և քննարկելով գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի հաղորդումը «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգ»-ի հաստատման մասին՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել **«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգ»**-ը:

*****

Լսելով և քննարկելով ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ց. Ակոպյանի հաղորդումը «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ»-ի հաստատման մասին՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել **«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ»**-ը:

*****

Լսելով և քննարկելով ուսումնական գծով պրոռեկտոր Բ. Մարգարյանի հաղորդումը «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ֆակուլտետի կանոնակարգ»-ի հաստատման մասին՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել **«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ֆակուլտետի կանոնակարգ»**-ը:

*****

ԼՍԵՑԻՆ - Համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Կարինե Ելոյանին, որը գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց ֆրանսերենի ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Արփինե Գագիկի Մկրտչյանի դիմումը նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

Քվեարկության համար գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.

Ց. Ակոպյան - նախագահ
Գ. Գևորգյան - անդամ
Հ. Ներսիսյան - անդամ

Գիտական խորհրդի 55 անդամներից ներկա էին 49-ը, որոնցից քվեարկեցին՝ ‘41’-կողմ, ‘6’-դեմ, անվավեր է ճանաչվել ‘2’ քվեաթերթիկ:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատեցին փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:
2. Հաշվի առնելով, որ Արփինե Գագիկի Մկրտչյանի կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 «ՀՀ գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ հոդվածի “բ” ենթակետին, բանասիրական գիտությունների թեկնածու Արփինե Գագիկի Մկրտչյանին շնորհել դոցենտի գիտական կոչում «լեզվաբանություն» մասնագիտությամբ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշումը:

*****

ԼՍԵՑԻՆ – Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը ֆրանսերենի ամբիոնի հայցորդ Շահանե Յուրիկի Պետրոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ֆրանսերենի ամբիոնի հայցորդ Շահանե Յուրիկի Պետրոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ **«Բանաղարձումների լեզվամշակութային առանձնահատկությունները խոսակցական ֆրանսերենի դարձվածային միավորներում (հայերենի զուգադրությամբ)»** /Ժ.02.08 «Ռոմանական լեզուներ» ֆրանսերեն մասնագիտությամբ/: Գիտական ղեկավար հաստատել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամ Կարապետի Բարլեզիզյան:

*****

ԼՍԵՑԻՆ – Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը ֆրանսերենի ամբիոնի հայցորդ Աստղիկ Լևոնի Մարգարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաստատել ֆրանսերենի ամբիոնի հայցորդ Աստղիկ Լևոնի Մարգարյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ **«Լեզվամշակութային իրակությունների նույնարժեքության խնդիրը Ա. Չոպանյանի հայերենից ֆրանսերեն թարգմանություններում»** /Ժ.02.08 «Ռոմանական լեզուներ» ֆրանսերեն մասնագիտությամբ/:
2. Դիմել ԲՈՀ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Մելանյա Սմբատի Ղազարյանին /Ժ.02.08 «Ռոմանական լեզուներ» ֆրանսերեն մասնագիտությամբ/ ֆրանսերենի ամբիոնի հայցորդ Աստղիկ Լևոնի Մարգարյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար նշանակելու թույլտվություն ստանալու համար:

*****

ԼՍԵՑԻՆ – Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը ֆրանսերենի ամբիոնի հայցորդ Սյուզաննա Գագիկի Թադևոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաստատել ֆրանսերենի ամբիոնի հայցորդ Սյուզաննա Գագիկի Թադևոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ **«Եղանակավորման իմաստաշարահյուսական միջոցները ֆրանսիական լրագրային խոսույթում»** /Ժ.02.08 «Ռոմանական լեզուներ» ֆրանսերեն մասնագիտությամբ/:
2. Դիմել ԲՈՀ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Նաիրա Հենրիկի Մանուկյանին /Ժ.02.08 «Ռոմանական լեզուներ» ֆրանսերեն մասնագիտությամբ/ ֆրանսերենի ամբիոնի հայցորդ Սյուզաննա Գագիկի Թադևոսյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար նշանակելու թույլտվություն ստանալու համար:

*****

ԼՍԵՑԻՆ – Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը «**Աշխարհի լեզվական պատկերը»** IV և V միջազգային գիտաժողովի նյութերը տպագրության երաշխավորման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Երաշխավորել տպագրության **«Աշխարհի լեզվական պատկերը»** IV և V միջազգային գիտաժողովի նյութերը:

*****

ԼՍԵՑԻՆ – Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը Երիտասարդ գիտնականների 2012թ. դեկտեմբերին կայացած **«Գրականության արդի խնդիրները»** խորագրով գիտաժողովի գիտական հոդվածների ժողովածուի նյութերի տպագրության երաշխավորման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Երաշխավորել տպագրության Երիտասարդ գիտնականների 2012թ. դեկտեմբերին կայացած **«Գրականության արդի խնդիրները»** խորագրով գիտաժողովի գիտական հոդվածների նյութերը:

*****

ԼՍԵՑԻՆ – Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը 2013թ. սեպտեմբերին կայացած **«Русский язык в формате 3D: лингвистика, образование, культура»** խորագրով 3-րդ միջազգային գիտաժողովի նյութերի տպագրության երաշխավորման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Երաշխավորել տպագրության 2013թ. սեպտեմբերին կայացած **«Русский язык в формате 3D: лингвистика, образование, культура»** խորագրով 3-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուն:

****